

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ****«Կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգապիտակավորման մասին»****Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝****ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 թվականի սեպտեմբերի 28-ի****թիվ 1059/2010 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)****(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի կողմից սպառվող էներգիայի եւ այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների ներկայացման միջոցով նշում կատարելու մասին»

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը<sup>1</sup>, եւ մասնավորապես դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտերը՝ կապված էներգասպառող այնպիսի արտադրանքի պիտակավորման հետ, որն ունի էներգախնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալությամբ արդյունավետության մակարդակներում էական տարբերություններ.

<sup>1</sup> ՊՏ 153, 18.6.2010թ., էջ 1:

- 2) կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգապիտակավորման վերաբերյալ դրույթները սահմանվել են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1997 թվականի ապրիլի 16-ի 97/17/ԵՀ հրահանգով՝ կապված կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգապիտակավորման հետ<sup>1</sup>.
- 3) կենցաղային սպասք լվացող մեքենաների կողմից օգտագործվող էներգիան կազմում է Միությունում կենցաղային օգտագործման ընդհանուր էներգիայի պահանջարկի զգալի մասը: Էներգաարդյունավետության արդեն իսկ ձեռք բերված բարելավումներից բացի՝ գոյություն ունի կենցաղային սպասք լվացող մեքենաների կողմից էներգիայի սպառումը հետագայում նվազեցնելու զգալի հնարավորություն.
- 4) 97/17/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչել եւ սույն կանոնակարգով նոր դրույթներ սահմանել՝ կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգաարդյունավետությունն էլ ավելի բարելավելու եւ շուկան էներգաարդյունավետ տեխնոլոգիաների շուկայի վերափոխելն արագացնելու համար էներգապիտակավորման միջոցով մատակարարների համար դինամիկ խրախուսական միջոցների ստեղծումն ապահովելու նպատակով.
- 5) պիտակի վրա ներկայացված տեղեկությունները պետք է ձեռք բերվեն չափման հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերի կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների՝ այդ թվում, առկայության դեպքում, ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա, որոնք թվարկված են Տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի, ինչպես նաեւ Տեղեկատվական հասարակության ծառայությունների կանոնների բնագավառում տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝

<sup>1</sup> ՊՏ L 118, 7.5.1997թ., էջ 1:

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի I հավելվածում<sup>1</sup>.

- 6) սույն կանոնակարգով պետք է սահմանվի կենցաղային սպասք լվացող մեքենաների պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը.
- 7) բացի դրանից, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային սպասք լվացող մեքենաների տեխնիկական փաստաթղթերին եւ տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները.
- 8) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային սպասք լվացող մեքենաների հեռակա վաճառքի ցանկացած ձեւի դեպքում, գովազդում եւ տեխնիկական գովազդային նյութերում տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջները.
- 9) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը.
- 10) 97/17/ԵՀ հրահանգից դեպի սույն կանոնակարգ անցումը դյուրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել սույն կանոնակարգի համաձայն պիտակավորված կենցաղային սպասք լվացող մեքենաների համապատասխանությունը 97/17/ԵՀ հրահանգին.
- 11) հետեւաբար, 97/17/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչել,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

<sup>1</sup> ՊՏ L 204, 21.7.1998թ., էջ 37:

### Հոդված 1

#### **Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը**

Սույն կանոնակարգով սահմանվում են էլեկտրական ցանցից աշխատող կենցաղային սպասք լվացող մեքենաների, ինչպես նաեւ էլեկտրական ցանցից աշխատող սպասք լվացող այնպիսի մեքենաների, որոնք կարող են աշխատել նաեւ մարտկոցներով՝ ներառյալ ոչ կենցաղային նպատակներով օգտագործման համար վաճառվող եւ ներկառուցված կենցաղային սպասք լվացող մեքենաների պիտակավորմանը եւ արտադրանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:

### Հոդված 2

#### **Սահմանումները**

Ի հավելումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «կենցաղային սպասք լվացող մեքենա» նշանակում է սարք, որը քիմիական, մեխանիկական, ջերմային եւ էլեկտրական միջոցներով մաքրում, ողողում եւ չորացնում է սպասք, ապակե սպասք, կտրող առարկաներ եւ խոհանոցային պարագաներ եւ որը նախատեսված է ոչ մասնագիտական օգտագործման համար.
- 2) «ներկառուցված կենցաղային սպասք լվացող մեքենա» նշանակում է կենցաղային սպասք լվացող մեքենա, որը նախատեսված է պահարանում, որմնախորշում կամ նմանատիպ վայրում տեղադրելու համար եւ որը պետք է վերջնական կահավորվի.
- 3) «մեկ անձի համար նախատեսված սպասք» նշանակում է մեկ անձի օգտագործման համար նախատեսված հախճապակյա կամ կավե սպասքի, ապակե սպասքի եւ կտրող առարկաների որոշակի հավաքածու.

- 4) «դրվածքային հզորություն» նշանակում է մատակարարի կողմից նշված բաղադրիչներ ունեցող՝ մեկ անձի համար նախատեսված սպասքի առավելագույն քանակ, որն ընտրված ծրագրով կարող է մշակման ենթարկվել մատակարարի ցուցումներին համապատասխան բեռնված կենցաղային սպասք լվացող մեքենայում.
- 5) «ծրագիր» նշանակում է որոշակի մակարդակների կեղտոտվածության կամ որոշակի տեսակի բեռնման կամ երկուսի համար էլ մատակարարի կողմից նախապես սահմանված եւ որպես համապատասխան հայտարարված այնպիսի գործողությունների շարք, որոնք միասին կազմում են մեկ ամբողջական ցիկլ.
- 6) «ծրագրի ժամանակ» նշանակում է ծրագրի սկզբից մինչեւ ծրագրի ավարտն ընկած ժամանակահատված՝ բացառությամբ վերջնական սպառողի կողմից ծրագրված ցանկացած հետաձգման.
- 7) «ցիկլ» նշանակում է մաքրման, ողողման եւ չորացման ամբողջական գործընթաց, որը սահմանվել է ընտրված ծրագրի համար.
- 8) «անջատված ռեժիմ» նշանակում է վիճակ, որի ժամանակ կենցաղային սպասք լվացող մեքենան անջատվում է սարքի կառավարման միջոցներով կամ անջատիչներով, որոնք հասանելի են եւ նախատեսված են սովորական օգտագործման ժամանակ վերջնական սպառողի կողմից շահագործվելու համար՝ նվազագույն էներգասպառում ապահովելու նպատակով, ինչը կարող է շարունակվել անորոշ ժամանակ, երբ կենցաղային սպասք լվացող մեքենան միացված է հոսանքի աղբյուրին եւ օգտագործվում է մատակարարի ցուցումների համաձայն. եթե վերջնական սպառողի համար հասանելի չեն կառավարման միջոցներ կամ անջատիչներ, «անջատված ռեժիմ» նշանակում է այնպիսի վիճակ, որին կենցաղային սպասք լվացող մեքենան ինքնուրույն անցնում է այն բանից հետո, երբ այն վերադառնում է հաստատուն էներգիայի սպառման ռեժիմին.

- 9) «միացված ռեժիմ» նշանակում է նվազագույն էներգասպառման ռեժիմ, որը ծրագիրն ավարտվելուց եւ կենցաղային սպասք լվացող մեքենան դատարկելուց հետո առանց վերջնական սպառողի կողմից հետագա միջամտության կարող է շարունակվել անորոշ ժամանակով.
- 10) «համարժեք կենցաղային սպասք լվացող մեքենա» նշանակում է կենցաղային սպասք լվացող մեքենայի մոդել, որը շուկայահանվել է միեւնույն դրվածքային հզորությամբ, տեխնիկական եւ շահագործման բնութագրերով, էներգիայի եւ ջրի սպառմամբ, ինչպես նաեւ օդային ակուստիկ աղմուկի առաջացմամբ, ինչ որ միեւնույն մատակարարի կողմից այլ առետրային-ծածկագրային համարի ներքո շուկայահանված կենցաղային սպասք լվացող մեքենայի մեկ այլ մոդել.
- 11) «վերջնական սպառող» նշանակում է սպառող, որը գնում է, կամ ակնկալվում է, որ կգնի կենցաղային սպասք լվացող մեքենան.
- 12) «վաճառքի կետ» նշանակում է վայր, որտեղ կենցաղային սպասք լվացող մեքենաները ցուցադրվում են կամ առաջարկվում վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար:

### Հոդված 3

#### **Մատակարարների պարտականությունները**

Մատակարարներն ապահովում են հետեւյալը.

- ա) յուրաքանչյուր կենցաղային սպասք լվացող մեքենա համալրված լինի I հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող տպագրված պիտակով.
- բ) տրամադրվեն II հավելվածով սահմանված արտադրանքի տեղեկաթերթիկները.

- գ) անդամ պետությունների մարմիններ եւ Հանձնաժողով ներկայացված պահանջի դեպքում տրամադրվեն III հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) կենցաղային սպասք լվացող մեքենայի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդն էներգիային առնչվող կամ գնի վերաբերյալ տեղեկություններ է պարունակում.
- ե) կենցաղային սպասք լվացող մեքենայի որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշ տեխնիկական պարամետրերը, ներառի այդ մոդելի էներգաարդյունավետության դասը:

#### Հոդված 4

#### **Վաճառողների պարտականությունները**

Վաճառողներն ապահովում են հետեւյալը.

- ա) վաճառքի կետում ներկայացված յուրաքանչյուր կենցաղային սպասք լվացող մեքենայի դեպքում 3(ա) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես զետեղված լինի սպասք լվացող մեքենայի առջեւի կամ վերին մասի արտաքին մակերեսույթին, որ այն հստակ տեսանելի լինի.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող՝ կենցաղային սպասք լվացող մեքենաները շուկայահանվեն IV հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկություններով այն դեպքում, երբ չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված կենցաղային սպասք լվացող մեքենան.

- գ) կենցաղային սպասք լվացող մեքենայի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդն էներգիային առնչվող կամ գնի վերաբերյալ տեղեկություններ է պարունակում.
- դ) կենցաղային սպասք լվացող մեքենայի որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշ տեխնիկական պարամետրերը, տեղեկատվություն պարունակի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի վերաբերյալ:

#### *Հոդված 5*

#### **Չափման մեթոդները**

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերով, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների վրա:

#### *Հոդված 6*

#### **Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը**

Էներգաարդյունավետության հայտարարված դասի, տարեկան էներգասպառման, ջրի տարեկան սպառման, չորացման արդյունավետության ինդեքսի, ծրագրի ժամանակի, անջատված եւ միացված ռեժիմներում էներգասպառման, ինչպես նաեւ միացված ռեժիմի եւ օդային ակուստիկ աղմուկի առաջացման տեւողության համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են V հավելվածով սահմանված ընթացակարգը:



### Հոդված 7

#### **Վերանայումը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո չորս տարվա ընթացքում Հանձնաժողովը վերանայում է այն՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը: Վերանայման արդյունքում գնահատվում են, մասնավորապես, V հավելվածով սահմանված ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները:

### Հոդված 8

#### **Ուժը կորցրած ճանաչելը**

97/17/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2011 թվականի դեկտեմբերի 20-ից:

### Հոդված 9

#### **Անցումային դրույթներ**

1. 3(դ), (ե), 4(բ), (գ) եւ (դ) հոդվածները չեն կիրառվում տպագիր այն գովազդի եւ տեխնիկական գովազդային նյութերի դեպքում, որոնք հրապարակվել են նախքան 2012 թվականի մարտի 30-ը:
2. Նախքան 2011 թվականի նոյեմբերի 30-ը շուկայահանված կենցաղային սպասք լվացող մեքենաները պետք է համապատասխանեն 97/17/ԵՀ հրահանգով սահմանված դրույթներին:
3. Եթե «Կենցաղային սպասք լվացող մեքենաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՄ հրահանգի<sup>1</sup> համար ընդունվի որեւէ կիրարկման միջոց, ապա կենցաղային սպասք լվացող մեքենաները, որոնք համապատասխանում են մաքրման արդյունավետության պահանջների

<sup>1</sup> ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

մասով այս կիրարկման միջոցի դրույթներին եւ սույն կանոնակարգի դրույթներին, ինչպես նաեւ շուկայահանվել են կամ առաջարկվել վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար նախքան 2011 թվականի դեկտեմբերի 20-ը, կհամարվեն 97/17/ԵՀ հրահանգի պահանջներին համապատասխանող:

### *Հոդված 10*

#### **Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուն հաջորդող 20-րդ օրը:

Կիրառելի է 2011 թվականի դեկտեմբերի 20-ից: Սակայն, 3(դ), (ե), 4(բ), (գ) եւ (դ) հոդվածները կիրառելի են 2012 թվականի ապրիլի 20-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2010 թվականի սեպտեմբերի 28-ին:

*Հանձնաժողովի կողմից՝*

*Նախագահ*

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

---

ՀԱՎԵԼՎԱԾ I

Պիտակ

1. ՊԻՏԱԿ



I  
II

III

IV

V  
VI  
VII  
VIII


- 1) Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
  - II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որտեղ «մոդելի նույնականացուցիչը» հիմնականում նշանակում է տառաթվային ծածկագիր, որով որոշակի կենցաղային սպասք լվացող մեքենայի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
  - III. IV հավելվածի 1-ին կետի համաձայն սահմանված էներգաարդյունավետության դասը. այն սլաքի ծայրը, որի վրա նշված է կենցաղային սպասք լվացող մեքենայի էներգաարդյունավետության դասը, պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
  - IV. տարեկան էներգասպառումը (SEu) կՎտժ/տարով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն.
  - V. ջրի տարեկան սպառումը( $QS_u$ ) լ/տարով, կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 3-րդ կետի համաձայն.
  - VI. չորացման արդյունավետության դասը՝ սահմանված VI հավելվածի 2-րդ կետի համաձայն.
  - VII. դրվածքային հզորությունը ստանդարտ մաքրման ցիկլի համար՝ մեկ անձի համար նախատեսված ստանդարտ սպասքի դեպքում .
  - VIII. օդային ակուստիկ աղմուկի առաջացումը՝ արտահայտված դԲ(ա) 1 պՎտ-ի հաշվով եւ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը:

- 2) Պիտակի ձեւը պետք է համապատասխանի 2-րդ կետին: Որպես բացառություն՝ այն դեպքում, երբ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգի (ԵԽ)<sup>1</sup> համաձայն մոդելին շնորհիվ է «ԵՄ Էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ Էկոպիտակի պատճենը:

<sup>1</sup> ՊՏ L 27, 30.1.2010թ., էջ 1:

2. ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ

Պիտակի ձևը պետք է համապատասխանի ստորև բերված պատկերին,



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համապատասխանի վերը նշված մասնագրերին.

բ) Ֆոնը պետք է լինի սպիտակ.

գ) գույները պետք է համապատասխանեն ԿԿԴՍ գույներին՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին եւ սեւ՝ համաձայն հետեւյալ օրինակի՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին).

1. **Պիտակի սահմանագծեր.** 5 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

2. **ԵՄ պատկերանիշ.** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. **Էներգիայի պատկերանիշ.** գույն՝ X-00-00-00: Ցուցադրված գրաֆիկական պատկերը, ԵՄ պատկերանիշը եւ Էներգիայի պատկերանիշը (համակցված)՝ լայնությունը՝ 92 մմ, բարձրությունը՝ 17 մմ:

4. **Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը.** 1 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, երկարություն՝ 92,5 մմ:

5. **A-ից G սանդղակ.**

— **Սլաք՝** բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0,75 մմ, գույներ՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ եւ սպիտակ. «+» պայմանանշան, «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ, մեծատառ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

#### 6. Էներգաարդյունավետության դասը.

- **Սլաքը՝** լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 26 մմ, 100 % սեւ:
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ, մեծատառ եւ սպիտակ. «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

#### 7. Էներգիա.

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, մեծատառեր, 100 % սեւ:

#### 8. Տարեկան էներգասպառումը

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 37 կետ, 100 % սեւ:
- **Երկրորդ տողը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 17 կետ, 100 % սեւ:



**9. Ջրի տարեկան սպառումը.**

- **Գրաֆիկական պատկերը, ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

**10. Չորացման արդյունավետության դասը.**

- **Գրաֆիկական պատկերը, ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, հորիզոնական սանդղակ՝ 75 %, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ 22 կետ, հորիզոնական սանդղակ՝ 75 %, 100 % սեւ:

**11. Դրվածքային հզորությունը.**

- **Գրաֆիկական պատկերը, ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

**12. Աղմուկի առաջացումը.**

- **Գրաֆիկական պատկերը, ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծը՝** 2 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

— **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

**13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.**

**14. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**

**15.** Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվի 92 × 15 մմ տարածության մեջ:

**16. Կանոնակարգի համարակալումը.** «Կալիբրի» տառատեսակ, թավ 9 կետ, 100 % սեւ:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

1. Կենցաղային սպասք լվացող մեքենայի՝ արտադրանքի վերաբերյալ տեղեկաթերթիկի մեջ զետեղված տեղեկությունները պետք է ներկայացված լինեն հետևյալ հերթականությամբ եւ ներառված լինի արտադրանքի բրոշյուրի կամ արտադրանքի հետ տրամադրվող այլ գրականության մեջ.
  - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
  - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը՝ հիմնականում տառաթվային ծածկագիր, որով որոշակի կենցաղային սպասք լվացող մեքենայի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
  - գ) դրվածքային հզորությունը ստանդարտ մաքրման ցիկլի համար՝ մեկ անձի համար նախատեսված ստանդարտ սպասքի դեպքում.
  - դ) էներգաարդյունավետության դասը՝ IV հավելվածի 1-ին կետի համաձայն.
  - ե) եթե թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՄ) համաձայն կենցաղային սպասք լվացող մեքենային տրվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող են ներառվել այդ տեղեկությունները.
  - զ) տարեկան էներգասպառումը (*SE<sub>a</sub>*) կՎտժ/տարով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն: Այն նկարագրվում է որպես «X» կՎտժ տարեկան կտրվածքով էներգասպառում՝ սառը ջրի լիցքավորման եւ ցածր էներգասպառման ռեժիմներով ստանդարտ մաքրման 280 ցիկլերի հիման վրա: Փաստացի էներգասպառումը կախված կլինի նրանից, թե ինչպես է օգտագործվում սարքը».::

- է) ստանդարտ մաքրման ցիկլի էներգասպառումը ( $E_t$ ) .
- ը) անջատված եւ միացված ռեժիմներում էներգասպառումը ( $P_w$  եւ  $P_d$ )
- թ) ջրի տարեկան սպառումը ( $Q S_w$ ) լ/տարով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 3-րդ կետի համաձայն. այն նկարագրվում է որպես «X» լիտր տարեկան կտրվածքով ջրի սպառում՝ ստանդարտ մաքրման 280 ցիկլերի հիման վրա: Ջրի փաստացի սպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքվածքն օգտագործվում»:
- ժ) չորացման արդյունավետության դասը՝ սահմանված VI հավելվածի 2-րդ կետի համաձայն եւ արտահայտված որպես «X» չորացման արդյունավետության դաս «G»-ից (ամենաքիչ արդյունավետ) մինչեւ «A» (ամենաարդյունավետ) սանդղակով»: Եթե այս տեղեկությունները տրամադրվում են աղյուսակում, ապա դրանք կարող են ներկայացվել այլ կերպ՝ պայմանով, որ պարզ է, որ սանդղակը G-ից (ամենաքիչ արդյունավետ) A-ն (ամենաարդյունավետ) է:
- ժա) նշում, որ «ստանդարտ ծրագիրը» այն ստանդարտ մաքրման ցիկլն է, որին վերաբերում են պիտակի վրա եւ տեղեկաթերթիկում ներկայացված տեղեկությունները, եւ որ այս ծրագիրը համապատասխան է միջին կեղտոտվածության խոհանոցային սպասքը մաքրելու համար, եւ որ էներգիայի եւ ջրի համակցված սպառման տեսանկյունից այն ամենաարդյունավետ ծրագիրն է.
- ժբ) ստանդարտ մաքրման ցիկլի համար ծրագրի ժամանակը՝ արտահայտված րոպեներով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- ժգ) միացված ռեժիմի տեսողությունը ( $T_d$ ), եթե կենցաղային սպասք լվացող մեքենան ունի հզորության կառավարման համակարգ.
- ժդ) օդային ակուստիկ աղմուկի առաջացումը՝ արտահայտված դԲ(ա)-ով 1 պՎտ-ի հաշվով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

- Ժե) եթե կենցաղային սպասք լվացող մեքենան նախատեսված է ներկառուցելու համար, ապա պետք է այդ մասին նշում կատարել:
2. Մեկ տեղեկաթերթիկում կարող են ներառվել նույն մատակարարի կողմից մատակարարված՝ մի շարք կենցաղային սպասք լվացող մեքենայի մոդելների վերաբերյալ տեղեկություններ:
  3. Տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի տեսքով (գունավոր կամ սեւ ու սպիտակ): Այս դեպքում 1-ին կետում նշված տեղեկությունները, որոնք դեռ ցուցադրված չեն պիտակի վրա, նույնպես տրամադրվում են:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ 22***Տեխնիկական փաստաթղթերը**

1. 3(գ) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝
  - ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
  - բ) սպասք լվացող մեքենայի մոդելի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է դրա միանշանակ եւ դյուրին նույնականացման համար.
  - գ) անհրաժեշտության դեպքում, հղումներ կիրառված ներդաշնակեցված չափանիշներին.
  - դ) անհրաժեշտության դեպքում, օգտագործված մյուս տեխնիկական չափանիշները եւ մասնագրերը.
  - ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու նպատակով լիազորված անձին նույնականացնող տվյալները եւ ստորագրությունը.
  - զ) չափումների համար տեխնիկական պարամետրեր հետեւյալ կարգով՝
    - i) *էներգասպառումը.*
    - ii) *ջրի սպառումը.*
    - iii) *ծրագրի ժամանակը.*
    - iv) *չորացման արդյունավետությունը.*
    - v) *էներգասպառումը «անջատված ռեժիմում».*
    - vi) *էներգասպառումը «միացված ռեժիմում».*
    - vii) *«միացված ռեժիմի» փետողությունը.*
    - viii) *օդային ակուստիկ աղմուկի առաջացումը.*

է) VII հավելվածին համապատասխան կատարված հաշվարկների արդյունքները:

2. Եթե կենցաղային սպասք լվացող մեքենայի կոնկրետ մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերի փաթեթում ներառված տեղեկություններն ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ համարժեք կենցաղային սպասք լվացող այլ մեքենաներից արտարկման միջոցով կամ այդ երկու միջոցներով էլ, ապա փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտարկումների կամ այդ երկուսի մանրամասները, ինչպես նաեւ կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար մատակարարների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Տեղեկությունները պետք է ներառեն նաեւ կենցաղային սպասք լվացող մեքենայի բոլոր այլ համարժեք մոդելների ցանկը, եթե տեղեկություններն ստացվել են նույն եղանակով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ 24***Տրամադրվելիք տեղեկատվությունն այն դեպքերում, երբ վերջնական սպառողները չեն կարող տեսնել ցուցադրված արտադրանքը**

1. 4(բ) հոդվածում նշված տեղեկությունները տրամադրվում են հետևյալ կերպ՝
  - ա) էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է VI հավելվածի 1-ին կետում.
  - բ) դրվածքային հզորությունը ստանդարտ մաքրման ցիկլի համար՝ մեկ անձի համար նախատեսված ստանդարտ սպասքի դեպքում.
  - գ) տարեկան էներգասպառումը (*SEU*) կՎտժ/տարով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն.
  - դ) ջրի տարեկան սպառումը (*RSU*) լ/տարով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 3-րդ կետի համաձայն.
  - ե) չորացման արդյունավետության դասը՝ VI հավելվածի 2-րդ կետի համաձայն.
  - զ) օդային ակուստիկ աղմուկի առաջացումը՝ արտահայտված դԲ(ա)-ի եւ 1 պՎտ-ի միջեւ հարաբերակցությամբ եւ կլորացված մինչև ամենամոտ ամբողջական թիվը.
  - է) եթե մոդելը նախատեսված է ներկառուցելու համար, ապա պետք է այդ մասին նշում կատարել:
2. Եթե նաեւ տրամադրվում են արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, դա արվում է II հավելվածում նշված ձեւով եւ հերթականությամբ:



3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթերցման համար տառատեսակով եւ տառաչափով:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ 26***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման  
ընթացակարգը**

3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների մարմինները ստուգում են կենցաղային սպասք լվացող մեկ մեքենա: Եթե չափված պարամետրերը չեն համապատասխանում մատակարարի կողմից ներկայացված եւ 1-ին աղյուսակում սահմանված միջակայքում նշված արժեքներին, ապա պետք է իրականացվեն կենցաղային սպասք լվացող եւս երեք մեքենայի չափումներ: Կենցաղային սպասք լվացող այդ երեք մեքենայի չափված արժեքների թվաբանական միջինը համապատասխանում է մատակարարի կողմից ներկայացված եւ 1-ին աղյուսակում սահմանված միջակայքում նշված արժեքներին՝ բացառությամբ էներգասպառման արժեքի, որի դեպքում չափված արժեքը է<sub>1</sub>-ի սահմանված արժեքից մեծ չէ ավելի, քան 6 %-ով:

Հակառակ դեպքում տվյալ մոդելը եւ կենցաղային սպասք լվացող մեքենայի մյուս բոլոր համարժեք մոդելները չեն համարվում 3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանող:

Անդամ պետությունների մարմինները կիրառում են հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի ընթացակարգեր, որոնք հիմնվում են լայն կիրառություն ունեցող արդիական մեթոդների, այդ թվում՝ այն մեթոդների վրա, որոնք սահմանված են այն փաստաթղթերում, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակված են *Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում*:

## Աղյուսակ 1

Չափված պարամետրը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
Էներգիայի տարեկան սպառումը	Չափված արժեքը չպետք է $SE_{\nu}$ -ի (*) սահմանված արժեքից ավելի մեծ լինի, քան 10 %-ով:
Ջրի սպառումը	Չափված արժեքը $Q_r$ -ի սահմանված արժեքից չպետք է ավելի մեծ լինի, քան 10 %-ով:
Չորացման արդյունավետության ինդեքսը	Չափված արժեքը $\eta_z$ -ի սահմանված արժեքից չպետք է ավելի փոքր լինի, քան 19 %-ով:
Էներգասպառումը	Չափված արժեքը չպետք է $E_r$ -ի սահմանված արժեքից ավելի մեծ լինի, քան 10 %-ով:
Ծրագրի ժամանակը	Չափված արժեքը չպետք է $Q_r$ -ի սահմանված արժեքից ավելի մեծ լինի, քան 10 %-ով :
Էներգասպառումն անջատված եւ միացված ռեժիմներում	$P_w$ եւ $P_{\nu}$ -երի էներգասպառման՝ 1,00 Վտ-ը գերազանցող չափված արժեքը չպետք է սահմանված արժեքից ավելի մեծ լինի, քան 10 %-ով: $P_w$ եւ $P_{\nu}$ -երի էներգասպառման 1,00 Վտ-ից պակաս կամ դրան հավասար՝ չափված արժեքը չպետք է գերազանցի սահմանված արժեքը ավելի, քան 0,10 Վտ-ով:
Միացված ռեժիմի տեսողությունը	Չափված արժեքը չպետք է $Q_{\nu}$ -ի սահմանված արժեքը ավելի մեծ լինի, քան 10 %-ով :
Օդային ակուստիկ աղմուկի առաջացումը	Չափված արժեքը պետք է համապատասխանի սահմանված արժեքին:
(*) «Սահմանված արժեք» նշանակում է արժեք, որը ներկայացվում է մատակարարի կողմից:	

## ՀԱՎԵԼՎԱԾ 28

**Էներգաարդյունավետության եւ չորացման արդյունավետության դասերը**

## 1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Կենցաղային սպասք լվացող մեքենայի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսի (ԷԱԻ) հիման վրա, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակում:

Կենցաղային սպասք լվացող մեքենաների էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) հաշվարկվում է VII հավելվածի 1-ին կետի համաձայն:

*Աղյուսակ 1***Էներգաարդյունավետության դասերը**

Էներգաարդյունավետության դաս	Էներգաարդյունավետության ինդեքս
A+++ (ամենարդյունավետ)	$ԷԱԻ < 50$
A++	$50 \leq ԷԱԻ < 56$
A+	$56 \leq ԷԱԻ < 63$
A	$63 \leq ԷԱԻ < 71$
B	$71 \leq ԷԱԻ < 80$
C	$80 \leq ԷԱԻ < 90$
D (ամենաքիչ արդյունավետ)	$ԷԱԻ \geq 90$

## 2. ՉՈՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Կենցաղային սպասք լվացող մեքենայի չորացման արդյունավետության դասը որոշվում է դրա չորացման արդյունավետության ինդեքսով (Ի<sub>չ</sub>), ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում:

Չորացման արդյունավետության ինդեքսը (Ի<sub>չ</sub>) հաշվարկվում է VII հավելվածի 2-րդ կետի համաձայն:

*Աղյուսակ 2***Չորացման արդյունավետության դասերը**

Չորացման արդյունավետության դաս	Չորացման արդյունավետության ինդեքս
A (ամենաարդյունավետ)	$h_z > 1,08$
B	$1,08 \geq h_z > 0,86$
C	$0,86 \geq h_z > 0,69$
D	$0,69 \geq h_z > 0,55$
E	$0,55 \geq h_z > 0,44$
F	$0,44 \geq h_z > 0,33$
G (ամենաքիչ արդյունավետ)	$0,33 \geq h_z$

## ՀԱՎԵԼՎԱԾ 30

**Էներգաարդյունավետության ինդեքսի, չորացման արդյունավետության  
ինդեքսի եւ ջրի սպառման հաշվարկման մեթոդը**

## 1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Կենցաղային սպասք լվացող մեքենայի մոդելի համար Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) հաշվարկելու նպատակով կենցաղային սպասք լվացող մեքենայի տարեկան Էներգասպառումը համեմատվում է դրա տարեկան ստանդարտ Էներգասպառման հետ.

ա) Էներգաարդյունավետության ինդեքսը (ԷԱԻ) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ տասնորդական նիշը՝

$$E_{UH} = \frac{SE_u}{SU_{E_u}} \times 100$$

որտեղ՝

$SE_u$  = կենցաղային սպասք լվացող մեքենայի տարեկան Էներգասպառմանը.

$SU_{E_u}$  = կենցաղային սպասք լվացող մեքենայի տարեկան ստանդարտ Էներգասպառմանը.

բ) տարեկան Էներգասպառումը ( $SE_u$ ) հաշվարկվում է կՎտժ/տարով հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ հարյուրերորդական նիշը՝

i)

$$SE_u = \zeta_t \times 280 + \frac{\left[ \zeta_w \times \frac{525600 - (T_d \times 280)}{2} + \zeta_v \times \frac{525600 - (D_d \times 280)}{2} \right]}{60 \times 1000}$$

որտեղ՝

$L_t$  = էներգասպառմանը՝ ստանդարտ ցիկլի համար, արտահայտված կՎտ-ով եւ կլորացված մինչեւ հազարերորդական նիշը.

$L_d$  = էներգիան «միացված ռեժիմում»՝ ստանդարտ մաքրման ցիկլի համար, արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդական նիշը.

$L_w$  = էներգիան «անջատված ռեժիմում»՝ ստանդարտ մաքրման ցիկլի համար,

արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդական նիշը.

$\sigma_d$  = ծրագրի ժամանակը ստանդարտ մաքրման ցիկլի համար, արտահայտված րոպեներով եւ կլորացված մինչեւ ամենամոտ րոպեն.

280 = տարեկան կտրվածքով ստանդարտ մաքրման ցիկլերի ընդհանուր թվին.

ii) եթե կենցաղային սպասք լվացող մեքենան ունի հզորության կառավարման համակարգ, եւ եթե կենցաղային սպասք լվացող մեքենան ծրագիրն ավարտվելուց հետո ավտոմատ անցնում է «անջատված ռեժիմի», ապա  $AE_c$  հաշվարկվում է՝ հաշվի առնելով «անջատված ռեժիմի» արդյունավետ տեւողությունը՝ համաձայն հետեւյալ բանաձեւի՝

$$St_u = L_t \times 280 + \frac{\{(L_d \times \sigma_d \times 280) + L_w \times [525600 - (\sigma_d \times 280) - (\sigma_d \times 280)]\}}{60 \times 1000}$$

որտեղ՝

$\sigma_d$  = ստանդարտ մաքրման ցիկլի համար «անջատված ռեժիմի» չափված ժամանակը՝ արտահայտված րոպեներով եւ կլորացված մինչեւ ամենամոտ րոպեն.

280 = տարեկան կտրվածքով ստանդարտ մաքրման ցիկլերի ընդհանուր թվին.

գ) տարեկան ստանդարտ էներգասպառումը ( $SU_{E_u}$ ) հաշվարկվում է կՎտժ/տարով հետեյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ հարյուրերորդական նիշը՝

i)  $ps \geq 10$  դրվածքային հզորությամբ եւ 50 սմ-ից մեծ լայնությամբ կենցաղային սպասք լվացող մեքենաների համար՝

$$SU_{E_u} = 7,0 \times ps + 378$$

ii)  $ps \leq 9$  դրվածքային հզորությամբ կենցաղային սպասք լվացող մեքենաների համար՝ եւ  $9 < ps \leq 11$  դրվածքային հզորությամբ եւ  $\leq 50$  սմ-ից մեծ լայնությամբ կենցաղային սպասք լվացող մեքենաների համար՝

$$SU_{E_u} = 25,2 \times ps + 126$$

որտեղ՝

$ps$  = մեկ անձի համար նախատեսված սպասքի քանակը:

## 2. ՉՈՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ

Կենցաղային սպասք լվացող մեքենայի մոդելի Չորացման արդյունավետության ինդեքսը հաշվարկելու համար ( $I_{\text{e}}$ ) կենցաղային սպասք լվացող մեքենայի չորացման արդյունավետությունը համեմատվում է հղումային սպասք լվացող մեքենայի չորացման արդյունավետության հետ, որտեղ հղումային սպասք լվացող մեքենան ունի համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդներում նշված բնութագրերը՝ ներառյալ այն փաստաթղթերում սահմանված մեթոդները, որոնց հղումային համարները այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*.



- ա) Չորացման արդյունավետության ինդեքսը ( $h_2$ ) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ հարյուրերորդական նիշը՝

$$\ln h_2 = \frac{1}{\rho} \times \sum_{i=1}^{\rho} \ln\left(\frac{Q_{\phi,i}}{Q_{\zeta,i}}\right)$$

$$h_2 = \exp(\ln h_2)$$

որտեղ՝

$Q_{\phi,i}$  = (i) փորձարկման մեկ ցիկլի համար փորձարկվող կենցաղային սպասք լվացող մեքենայի չորացման արդյունավետությանը.

$Q_{\zeta,i}$  = (i) փորձարկման մեկ ցիկլի համար հղումային սպասք լվացող մեքենայի չորացման արդյունավետությանը.

$\rho$  = փորձարկման ցիկլերի թվին,  $\rho \geq 5$ .

- բ) Չորացման արդյունավետությունը (2) ստանդարտ մաքրման ցիկլի ավարտից հետո բեռնման յուրաքանչյուր առարկայի խոնավության միջին միավորն է: Խոնավության միավորը հաշվարկվում է, ինչպես ցույց է տրվում 1-ին աղյուսակում.

### Աղյուսակ 1

Ջրային հետքերի (ՋՀ) կամ խոնավության բծերի քանակը( $h_{\rho}$ )	Խոնավության ամբողջ տարածությունը ( $S_{\text{խ}}$ )՝ մմ <sup>2</sup> -ով	Խոնավության միավոր
$\text{ՋՀ} = 0$ եւ $h_{\rho} = 0$	Կիրառելի չէ	2 (ամենաարդյունավետ)
$1 < \text{ՋՀ} \leq 2$ կամ $h_{\rho} = 1$	$S_{\text{խ}} < 50$	1
$2 < \text{ՋՀ}$ կամ $h_{\rho} = 2$ կամ $h_{\rho} = 1$ եւ $\text{ՋՀ} = 1$	$S_{\text{խ}} > 50$	0 (ամենաքիչ արդյունավետ)

## 3. ՋՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ

Կենցաղային սպասք լվացող մեքենայի ջրի տարեկան սպառումը( $QS_u$ ) հաշվարկվում է լիտրերով եւ կլորացվում է մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը, ինչպես՝

$$QS_u = Q_t \times 280$$

որտեղ՝

$Q_t$  = ստանդարտ մաքրման ցիկլի համար ջրի սպառմանը՝ արտահայտված լիտրերով եւ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը:

---